

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆՅՔԸՆԴԱՓՐԻԿԷ

ՃԱՆԱԿԱՐԻՈՐԴՈՐՆԵՐԻՆ ԶԱՆԳԻՍԱՐԷ՝ Ի ՊԷՆԿՈՇԷՍ

Վ. Լ. ՔԱՄԵՐՈՆԻ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ 1

Մոգութեան հաւատք ընծայելն այս կողմերու թշուառութիւններէն մէկն է: Ամեն հիւանդութիւն և ամեն թշուառութիւնը կախարդութեան կամ շար ոգւոց արդիւնք կը համարուին. մոգին կը դիմեն, չարէն ազատելու յուսով, որ այս ամեն աղէտից պատճառ կ'ըլլայ:

Հմայութեան դիմողաց երբեմն յուսաւէն, երբեմն ալ վախնալէն շահելով կախարհին՝ քիչ ժամանակի մէջ բարեկեցիկ կենանք մը կը ստանայ. բայց իր տխուր օրերն ալ կու գան: Եթէ պատուաւոր անձ մը, տանտէրն կամ իր ընտանեաց մէկն հիւանդանայ, կախարդին վրայ կը կասկածին, կամ իր նախանձորդէն կ'ամբաստանուի թէ չարիք բերողն ինքն է. և թէ որ չխուսէ կամ չկարենայ ռամկին երեւակայութիւնն իր ամբաստանողին վրայ դարձնել, կը բռնուի կը կապուի ցցի մը և կ'այրեն մազմազ կրակով, քանի որ չի խոստովանիր իր յանցանքն: Եթէ ակամայ յանձն առնու յանցանքը, այն ատենն չորս կողմն մարդակներ կը դիզեն և կրակ կու տան, այսպէս իր հոգէվարքը փութացնելով կը զրաւի ի կենաց:

Շատ անգամ տանիւններն մէջ, կախարհն կերպ մը խնեթութիւն կեդնելով, իր պատիւը կը պահէ, և կը պարծի այն չարեաց վրայ զորս կը համարի թէ ինքն գործած ըլլայ. « Այս անձին վրայ մահ բերի. — Անձրեն արգիլեցի. — Ես, ես ինքս գրգռեցի զՎուհուհուս այս որ դնախիւրն աւարեն »:

Ապիտակ մոգութիւնն, զոր օրինակ ա-

պագային գուշակութիւնն, ջերմի խնամք, և այլն, յուռութիւններով և հմայութեամբք, սրբազան բան մը համարուած է, և շատ մ'այս արուեստից հմուտներ կան, որք մեծաւ մասամբ կանայք են, ընդհակառակն սեւ մոգութիւնն արանց միայն սեպհա-կանեալ է:

Արուեստս ընդհանրապէս ժառանգական է. բայց երբ մոգ մը կ'ամբաստանուի իբրեւ ճախող հմայութիւն ընող իշխանի մը կենաց կամ ստացուածոց վրայ, իրեն հետ զբոլոր ընտանիքն կը ջնջն, որպէս զի ոչ ոք յընտանեաց կարենայ վրէժխնդրութիւն ընել դատախազին դէմ:

Յիւզէք՛հէ մշտնի ձանձրութենէն սթա-փելու համար, աղաւնեաց որսորդութեամբ կը զուարճանայինք, որք իրիկուան գէմ կու գային ջուր խմելու մեր կեցած տեղէն քիչ հեռի, Այս մրցախաղին մէջ որոյ արդիւնքն կը համեմէր մեր խորտիկէն, կորսընցնողն կը հարկաւորէր, իբրեւ տուգանք, որովհալ թուով հրացանի բամփուշտ պատրաստել:

Նոյնպէս ժայռերու պատառուածքի մէջ կը գտնուէին տեսակ մը կենդանիք, որոնց միան ճագարի մի համն ունենալով, աղէկ կերակուր կ'ըլլար: Իրենց ոտից յարմար ձեռովն այս անասունիքս կարող են մագըլցել ուղղակայեաց ժայռից վրայ, և այնպէս ճանճից պէս կ'պած կենալ:

Իւզէք՛հէ երկար ժամանակ Ուկոկոյի ծաղկած դաւառն եղաւ, այլ կարաւանի մարդկանց շատն մեռան, որոց կատարածն պատմեցինք, և շարունակ երկու տարի հօն չանձրեւեց: Այս անանուներէի պա-

տաճարս՝ բնակիչքն անէծքի արդիւնք համարեցան, բազմութիւն մը գաղթեցան, և և մնացածն ապրուստ չունենալով, ստիպուեցան իրենց անասունըք ուտել մեծաւ մասամբ: Իսկ Հիւսա բնակիչքն համազունգ 'ի հայրենիս կը վերադառնան, և ծաղկածութիւնն կը սկսի. բայց անասնոց բազմութիւնն դեռ շատ նուազ է առաջինէն:

Այս դանաղան շարժմանց պատճառաւ, վիրաւորեալ ոտքիս ցանկ զայրացաւ, և ստիպուեցայ քանի մ'որ անշարժ կենալ: Երբայէս Մուրֆի դարձեալ ջերմէ բռնուեցաւ: Իսկ Տիլլոն՝ այնպէս առողջ չէր եղած բնաւ, և ուժի մէջ կը զգար ինք զինքը: Կ'ըսէր թէ այն տաժանական կենաց մէջ կրնար դեռ երկար տարիներ ապրիլ: Այսու հանդերձ իշխանին հետն կը բարեկամանայինք, այլ ևս կարող չէր անձամբ հարստանալարեւ զմեզ, որով մոկելի առանց դժուարութեան յարմարցուցինք:

Հարկը հատուցանելով ճամբայ ինկանք, և խնկկայէ մ'անցնելով հասանք Քէնզոյի գիւղն, որոյ գլխաւորն Միեյիւ-Մէֆուրի կամ Կարճ-Սրունք կը կոչուէր, և այն կողմիւ շարաքոյն բռնաւորն համաբուած էր:

Քէնզոյի մեր անցած տեղեաց մէջ ամենէն բազմամարդն էր: Մասնաւորապէս ղեմակներէ կը ձևանար տեղացոց բնակարանքն. բայց մէկ կողմը շատ տունք Պակամոյոյի բնակչաց կը պատկանէր, որոնք հօն իրենց գլխաւոր համբարանոցն բրած էին: Բնակարաններու մեծամեծ ձողերով շինուած ծածրը ըստ ոճոյ ծովնգիւրեայց, կէս քաղաքականութեան երեւոյթ մը կու տար գիւղին:

Երեք վիթխարի մոլորքներէք, մերձակայքը յարմար տեղ մը կ'ընծայէին, որ շատ հեռուէն կը տեսնուէին: Մեր բանակին այն հսկաներէն մէկուն ջովացած շառափոյններուն տակ զետեղեցինք, ուր հինգ հարիւր մարդիկ հանգիստ տեղաւորուեցան:

Այս դադարման ժամանակ, թափուցայ գլխաւորաց յուզարկաւորութեան վրայ ինչ ինչ տեղեկութիւնք ստանալ. այս են ինծի արուած տեղեկութիւնքն: Երբ քաղիս կը լուանան, որ բնաւ իր կենաց մէջ ըրած բանը չէ. ապա ուզիլ ծառի փորուածքի մէջ կը հանգչեցնեն: Ամեն օր, երկրորդ

այն ծառին քովն կ'երթան ողբալու համար, մեռելոյն վրայ շարակ և մոխիր կը սփռեն: Երբ ժամանակն տեսակ մը հոգէ հայի արեւոյթեան կու տան զիրենք:

Երբ կը սկսի ապականիլ, զգիալը տամալոյ մը վրայ կը տարածեն, ուր արեգական ցօղոյ կամ սնձրեկ տակ ըստ եղանակին, կը լուծուի, և հօն կը թողուի մինչև չոր ոսկրոտիքն մնան, զորս ապա կը թաղեն:

Ատենով այս հանդէսներու ժամանակ բաւական թուով գերիներ կը փողոտուին եղեր. բայց ինծի ըսածնուն համեմատ՝ շատ ժամանակէ 'ի վեր այս գործս չի կատարուիր: Ռամկին մարմինքը անխնամ կը ձգեն մօտ անտառին մէջ, շաղկակեր անասնոց կերակուր ըլլալու:

Շատ վուահումայք, որք իրենց ցեղին վայրենի սովորութիւններէն հրաժարած են, Քէնզոյի մերձակայքը կը բնակին, ուր տեղացոց անասունքը կը խնամեն, և յատկապէս երկրագործութեան կը զբաղին: Այն ցեղն որոյ կը վերաբերին՝ Ուկուկի հիւսիսակողմն կը բնակի, և Մազայի մեծ ազգին ճիւղ մ'է:

Վուահումայքը շատ անասուն ունին, բայց հաստատ բնակութիւն չունին: Կաթնեղներօք և մսեղներօք կ'ապրին. կաթն արեան հետ կը խառնեն, և միտն հում հում կը յօշատեն: Տեղէ տեղ կը թափառին կերակուր գտնելու համար, և գիշերն հիւրի կը կառուցանեն ծառի փողոյի ճիւղերով և վրան եղան անմազ և կակցուցած մորթով կը ծածկեն: Վուահումայք գործածած գէներն են կարճաբուն գեղարդն և լախտ տձև, և երկայրի սուր, նման հոովմէական լէգէնաց դաշնակին: Ունին և սաստուար վահան մը՝ վուատիթիւայց պէս:

Գործածած գէներէն կրնայ գուշակուիլ Վուահումայք քաջասրտութիւնն քան իրենց դրացիներուն, և մեծ երկիւղ կ'ազգեն իբրև անասնոց գողացողք: Իրենց և Մազայի ցեղին համար իրաւունք կը համարին՝ կովի տեսակ անասուն պահելու. ուրիշ ինչ բանի որ հանդիպին իրենց համով պատառ կ'ընեն:

Երկու մղոն միայն կայ ընդ մէջ Քէնզոյի և Մուսպուու, որ լայն և խորունկ հեղեղատէ մ'անունն առած է, յորում ցամաքութեան ժամանակն իսկ, ջրով լի մեծամեծ փոսեր կը գտնուին:

Անձրեային եղանակին մեջ այս հեղի-
դատս զայրացեալ գետ մը կը դառնայ, որ
կը թափի ՚ի Լուֆիտճի, որոյ առատ ջուր
մատուցողներէն մէկն է:

Տեղացի մը, որ ուրիշներէն աւելի մտա-
բաց կ'երևէր, ըսաւ ինծի թէ Մտապու-
ռութի հետ մինչև ՚ի Ռուսհայի գետախառ-
նունը գնացած էր, այսպէս կը կոչուի Լու-
ֆիտճիի վերնակողմանքն: Ապա յաւել թէ
այս Ռուսահան չոր եղանակներու միջոց՝
գրեթէ բոլորովին կը ցամբի, բայց անձրեկի
ժամանակ մեծ գետ մը կը դառնայ: Ինչ որ
հարցուցի անոր այս ըսած ջրոյն ընթացից
վրայ եւ ընդունած որոշ պատասխաններս,
իր ճշմարտութեան օգուտ վրայ կը վստա-
հացունեն զիս:

Ինչ ճամբով որ կ'երթայինք, տո՛ճե պատ-
նէշներ կը զատէին զդաշտերն եւ գճամբան
իրարմէ, մշակութիւնն ուրիշ կողմերէն
աւելի խնամքով եղած կ'երևէր:

Այս ուղևորութեան մէջ, կորզներէն մէկն
բեռովը դասալիք եղաւ. մեծ կորուստ էր,
վասն զի այս մարդաբաժնին սղոյթիւնն եւ
հարկաց վճարքն՝ մեր կերպամեններն շու-
տով կը նուազեցնէին: Պիւրդընի ուղևո-
րութենէն վերջն ամեն բան շատ փոխուած
էր. այն ատենն մէկ գրկաչափն տողից յԱ-
կոկոյ կը բերէր 64 առճիկ, մինչ դեռ ես
չիրցայ քսանէն աւելի արժեցեցնել, քիչ ան-
գամ տասնէն աւելի:

Հաւկիթն զեղխութիւն մ'էր. կարագն,
կաթն, մեղրն զարհուրելի արժէք ունէին:
Մէկ գրկաչափն Չանդալարի գնովն արժե-
ցնելով, այս մարդաբաժնիքն Անդղիայի-
նէն աւելի սուղ էին: Ուստի մէկ չալակի
կորուստն ծանր բան էր: ԶՊիւլա վեց զի-
նուորով զրկեցի դասալիքին ետեւէն եւ
Մտապուռութի իշխանէն խնդրեցի որ այս
խուզարկութեանս մէջ ինծի օգնէ. անօ-
գուտ աշխատութիւն. ոչ գողն գանուե-
ցաւ, եւ ոչ կերպան:

Կէսօրուան դէմ, իշխան մ'իր ծառա-
ներովն առ մեզ եկաւ, եւ վրանիս տակ եր-
կու ժամ կծկած կեցաւ. շատ զուարճալի
բան չէր, վասն զի վերէն վայր դառնահոտ
ճինճոտ կրկնոց մը վրան առեր էր:

Ինծի ըսաւ՝ թէ երբ ՚ի Չանդալար գնա-
ցած էր, զանազան ճերմակներ տեսած էր եւ
իրենց կերպ կերպ ստվորութիւնքը գիտէր,
անոր համար երբ այն ցեղէն մէկն իր եր-

կիրը կու դար, կը փափագէր անոնց հետ
ճանչուորիլ, եւ տեսնալ իրենց բերածը:
Տեսած բաներուն վրայ քիչ ուշադրութիւն
ըրաւ, բայց անծանօթ երեցածն ամենա-
մանր ուշադրութեամբ դնեց:

Կենդանեաց պատկերք ցուցի, յորոց զո-
մանս ճանչցաւ, եւ զծագրին հակառակ
կողմն առանց հատկանշուլ կը նայէր, ինչ
ըլլայն իմանալու համար, եւ ըստ իրեն այն
դէմքերն դեռ չէին լմնցած, վասն զի կեն-
դանոյն մէկ կողմն կ'երևէր:

Մեր տեսութեամբն ափսած, ուղեց որ
հօն երեք չորս օր աւելի կենանք, որպէս
զի ով որ սպիտակ մարդ չէր տեսած եւ
փափագէր ծանօթութիւն ունենալ, կարե-
նար գալ եւ տեսնել զմեզ:

Այս բանս որչափ տեղացոց ատրոթելի՝
մեզի շատ հաճոյ չանցաւ. փոխադրական
գաւազգիղ ըլլալ զվճարակոկոյս գո՛հ ընելու
համար, մեզի օգուտ մը չէր բերեր: Միւսերն
ոչ միայն ազատ էր այլ եւ մեր ծախիւքն,
որ զմեզ ցուցնելու համար, ստիպուած
էինք տեսնողներէն հրաման խնդրել:

Երբ ՚ի Մտապուռութեան կը մտնէինք, Ունի-
յանկէնմալէի վարչին, Սէիտ Խալն Սէլիմ
անուն, վերաբերեալ կարաւան մը հասաւ,
որ ծովեղերք փղոսկր կը տանէր, վառօդ
գնելու համար, Միւսամալոյի դէմ գործածե-
լու նպատակաւ: Քանի մը ժանիք այնչափ
մեծ էին, որ խորաբանջիւրին երկու քակա-
զի կ'ուզէր. ընթերցողն թող կրեակայէ
անոնք ծանրութիւնն, պիտալով որ մէկ
Մնիյամուէզի փղոսկրի կշիռն է հարիւր
քսան լիւրդէ, Չասոնք տանող մարդիկն այ-
լոց հաւասար աւուրչէքով գո՛հ կ'ըլլան,
բայց կրկին եւ եռապատիկ աւելի կերա-
կուր կ'ուզեն եւ կը բռնադատեն կորաւա-
նին զխաւորն կանկ առնելու երբ ուզենան:

Խալն Սէլիմ ճամբորդներուն հետ խառ-
նուած եւ Մալտիւլ Գատէր, Սղանդէի հետ
ընկերացող հնդիկ դերձակն: Իր տէրը
թողնելէն վերջն՝ միշտ հիւանդ եղած էր
կ'ըսէին, եւ հազիւ քայլելու ոյժ մնացեր էր
վրան: Թէ որ Արաքներն զինքն իր հիւան-
դութեան բոլոր ատենն խնամած չըլլային,
անօթութենէ կը մեռնէր. եւ որովհետեւ
Մեծին Բրիտանիոյ Հպատակն էր եւ խեղ-
ճութեան մէջ կը գտնուէր, տուի իրեն եր-
կու կանգուն մետաքս, ճամբուն ծախքն
թեթեւեղեցնելու համար:

Տնկալքերն մեզի խմացուցին թէ Վուանի-
յամուէզցիք որք մեզմէ 'ի Մվումէ մեկնամ
էին, և օշնութիւն ընդունած էին, մեր
դասալիքներուն ձեռնտու եղեր են, և կը
ջանան զերկիրն մեզի դէմ ոտք հանել, այս-
պէս երկրորդ անգամ հաստատեցին թէ
բնաւ երախտագիտութեան զգացմունքն
չունին: Մինչև իրենց իշխաններէն մէկն
յանդգնեցաւ մեր առջին եղևել և պարգև
մը կը խնդրէր, վասն զի հին բարեկամու-
թիւն ունէինք:

Ի սկզբան Վուակոկոցիք այնչափ համա-
րումն չունէին մեր գէնքերուն վրայ: « Մի
վստահիք, կ'ըսէին, ձեր հրացաններու
վրայ, որ մէկ անգամ դատարկելով, ալ
բանի մը չեն ծառայեր, այն ատենն նիզա-
կով զինեալքն զձեզ կը ոչնչացընեն »: Բայց
երբ յետալից հրացանի գաղտնիքն սկսաւ
'ի յայտ գալ և սուինքն զնիտէրից զլուին
անցուեցան, կարճեցաւ համարձակու-
թիւնին և մեր վերայ յարձըկելու վը-
տանգն ճանչցան, առանց շատ բազմու-
թիւն ըլլալու:

Իսկ Սէլմի կարաւանին հետ կրցանք
մեր նամակներն ղրկել. ապա զմոռնիլ
վճարելով, ուղևորեցանք գէպ 'ի Մվումե-
տա Մքալի, որ օր 18 էր յուլիսի: Ուկոկոյ
անցնելու միայն տուրքն եօթանասուն և
վեց կանգուն գունաւոր կերպասի հա-
սաւ, չորս հարիւրէն աւելի սովորական
կերպաս (քանիքի և մերիքանի), պղնձէ թե-
լի գալար մը և երեք լիպրէ մարգարիտ,
որ ծովեզերքի գնոյն հետ համեմատելով
հինգհարիւր տողարի կ'ըլլէ, և յՈւկոկոյ
կրկինը կ'արժէր: Սակայն հարկաց և բռնի
կանկ առնել տուող երկրէն արդէն անցեր
էինք յառաջ:



ԳՆՈՒԽ Ը.

Մվումտա Մքալի. — Տարաձայնութիւն մը. —
Խաղաղութեան հաստատուիւն. — Ուրախուիք. —
Մապունկուառու. — Մշակութիւնը. — Խեղցիկ
գործունեայ ժողովուրդը. — ձիհուէ լա Սին-
կայ. — Շողըբորդ մուրացիկներն. — Ողջոյնք առ-
նոր լուսինն. — Օձերու գէմ ատելութիւնն. —
Որդալիթք. — Կիզանուտ երկրի մէջէն երթը. —
Հրդեհակալ գաւառները. — Որսորդութեան
խրախուլթիւնն. — Լաւ ամրացուցած գեղը և
քաջ զինեալ իշխանն. — Աւազակներու այրին
յայտնուիւն. — Ի վէկաց յաճախեալ աղբիւր
մը. — Ռուկա-առուկայից յարձակումն:

Եբբ 1857ին Պիւրդըն և Սպիք հոսան
'ի Մվումտա Մքալի, որ կը նշանակէ այ-
րած դաշտագետիկ, ուրդել հազիւ սկսուած
էր և ջուրն նուազ, և 'ի Մտապուառուէն
ցճաղէ մէկ տեղ մը միայն ճանապարհ-
հորդն ուտելիք կրնար գտնել: Կարաւան-
ներն վարոցի բռնութեամբ կ'ացնէին, և
ոչ կարաւան մ'առանց շատ կրողներ
կորսնցընելու կրցեր էր անցնիլ: Այժմ ա-
մեն բան կերպարանափոխ եղեր է: Վուա-
քիմպուք՝ որ Ունիյամուէղի մէկ գաւառն
էին, իրենց բնակութենէն պատերազմաւ
հալածուելով, իրենց խրճիթներ լիներ և
ջուր գտնէին, և դաշտերն ջրեր և սկը-
սեր էին ընդարձակ տեղեր մշակել, և այս-
օր մարդու ձեռքով, այս այրած դաշտա-
գետինն բարեբեր եղած է:

Յետ հանդիպելու ջրարբի դաշտերու և
ջրակուտակներու, որոց երեսն գեղին չու-
լաններ կը ծածկէին, դադարեցանք մերձ
երկու գեղերու, ստրատափի մը վրայ չի-
նուած ծովու երեսէն 1097 մեզի բարձր, և
հետզհետէ գետինն զգալի կերպով կը
բարձրանար:

Երկրորդ օրն կանուխ 'ի Բուրուրու հա-
սանք, գեղատեսիլ հովտի մէջ շինուած
գեղ մը. միտքերնիս զրինք մեզի հարկաւ
օր սրաշարն առնելու չափ ժամանակ կե-
նալ. բայց դեռ հազիւ քառորդ մի ժամու
անցած էր, երբ տեսայ մեր մարդկանց
գէնքի վաղեմն, և պատերազմի պատրաս-
տուիւն:

Ատրճանակքն առնելով գիմցիւք 'ի գե-
ղը, և պաշտպանելու վիճակի մէջ գտանք.
դռներն փակ էին, և հրացաններու փողն

ի դակնեբու հետ խառն ցցապատնէնդ-
րէն դուրս կ'երկընային: Մէկ գնտակ մը
եթէ դիպուածով ձգուէր, պատերազմ կը
բացուէր, որոյ հետեանքն շատ վտանգա-
ւոր պիտի ըլլար. բնակիչքն ծածկուած
էին, և աներկիւղ մեր վրայ կրնային ար-
ժեկել, և թէ որ մերոնց մէկն սպաննէին
կամ վիրաւորէին, մնացածներն 'ի փա-
խուստ կը դառնային:

Այսպիսի վտանգէ ազատելու համար, իմ
մարդիկս իրենց առջի տեղն առաքեցի. և
զիսսառուղարկեցի այս պատրաստութեանց
պատճառն հարցընելու: Կա մեզի ըստ թէ
մեր գիրականոց կամ առաջնորդներէն մէկն,
Պակամայոյէն Մուրֆիի հետ եկողն, իր
գեղէն փղոսկր տարեր էր, վառադի հետ
փոխանակելու համար: Ազգայնութեան
պատճառաւ, քիրականոց, իր խոստումն
չէր կրցած պահել, ծովեզերքն արգիւտած
ըլլալով Ունիյամուէզցոց վառադ տալ քա-
նի որ Արաբներն Միրամայոյի հետ պատե-
րազմ ունին, Առաջնորդն կը խոստովանէր
իր պարտքն և կ'առաջարկէր բամպակե-
ղինք վճարել. բայց ասոնց գինն իրեն
յանձնուած փղոսկրին գնոյն չէր համապա-
տասխաներ: Ասկից մեծ վէճ ելեր էր, և
ընկերներէն ոմանք իր կողմն բռնած էին,
խնդիրն աւելի զայրանալով նախատինք
ալ եղած էր, անոր համար ահա պատե-
րազմի պատրաստութիւնը:

Իմ կողմանէս եղած խոստման վրայ, բըն-
նելու զգատն և իրաւունք տալ ունեցողին,
մէկէն հաշտութիւն եղաւ և իշխանն զմեզ
իր գիւղն մտցուց որ շատ կարգի մէջ էր:
Պարիսպն որ ամուր ցիցերով կը բոլորէր
զհիւղներն — երկայն զուգահեռակողը տա-
փարակ յարկով — երկու մուտք ունէր:
Երկու դրանց վերայ ամրոցներ կային մե-
ծամեծ քարերու կոյտերով, որպէս զի յար-
ձակման տունն թշնամեաց վրայ ձգէն:

Քիչ մը խօսակցութենէն վերջն, թումպէ
հրամուցուցն, բայց չընդունեցանք, գի'ու-
ղէինք շուտով մեր վրաններն դառնալ,
իշխանն թողուց որ երթանք, բայց հազիւ
թէ մեր տեղն հասեր էինք, քանի մը մար-
դիկ երեցան, որ ահագին գարեջրոյ աման-
ներ գիրկերնին առած մեր առջին բերին.
և քիչ մ'ալ իրենք համտես ըրին, իմացը-
նելու համար որ թունաւորեալ չէր, և կըր-
նայինք աներկիւղ ըմպել:

Խմացայ որ մեր քիրականոցն, բան չու-
նիմ կ'ըսէր, և բաւական կերպաս ունէր իշ-
խանին պարտքը հատուցանելու չափ. այն
պարտքն զոր ինքն ճանչցեր էր և յանձն
առեր էր, վճարել տուի: Այսպէս յարմար-
ցընելս ամենուն ուրախութիւն բերաւ,
թմրակաշարութիւնք, երգք, պարք, և կեր-
ուխումն մինչև առաւօտ տևեց:

Երկրորդ օրն եօթնին ճամբայ էինք. ծա-
ռուտ երկրի մը ցիրուցան քարակոյտնե-
րու և լայն կրանիտեայ հատորներու մէ-
ջէն, և ճամբուն զայոխվայրներուն վրայ
կ'ամրառնային ժայռուտ բլուրներ: Տասնին
մօտերն սիրուն լճակի մը հանդիպեցանք,
հօն կեցանք Նախաճաշկիրս ընելու հա-
մար: Թիթենիկէն որք չոր երկրի մէջ որ-
չափ որ դիտեցի, ջուրի մօտ ըլլալու նշան
է, բազմութեամբ այս սիրուն լճակիս չորս
բոլորտիքը կը թռչտէին. տասն տեսակ
զանազանեցի:

Երկուքին նորէն ճամբայ ելանք և քա-
րուտ տեղերէ անցնելով իրիկուան դէմ 'ի
Մապունկուուտ հասանք: Այն չորութեան
ժամանակն ալ, գետի երևոյթ ունէր. եր-
կայն բաժանմունքներ մէկ կամ երկու մը-
ղոնի չափի էին ջրով և միայն աւազակոյա-
ներով կամ յիսունէն ցհարիւր կանգուն
ժայռի կարկառներով զատուած էին: Այս
ջրանցքներն իննըսուն ոտք լայնութիւն ու-
նէին, իսկ լեցուն ատեն երկու հարիւր
կանգուն երկու եզերքէն հեռու կը տա-
րածուի:

Այսու հանդերձ, չեմ կարծեր, թէ ան-
ձրեային եղանակաց մէջ Մապունկուուտ
հաստատուն ջրոյ ընթացք մ'ըլլայ. յան-
կարծակի հեղեղատներ են իր ընդունած-
ներն, որ քարուտ տեղերէ վազելով քիչ
ջուր կը կորսնցընեն: Ռուահայի կամ Ռու-
ֆիտի արեւմտեան գետախառնունքն է:

Այս երթիս միջոց, մեծամեծ անասնոց
ոռնատանդեաց հանդիպեցանք, նոյնպէս
վայրենի կենդանեաց ոսկրտեաց, մաս-
նաւորապէս ռնգեղջիր մեծահատոր գլխու
մը. կարծրամորթ անասունքս ստէպ կը
տեսնուին այս կողմերս:

Յաջորդ օրուան ուղեգնացքնիս շատ լաւ
մշակուած երկրի մը մէջէն ըրինք, որոյ ժռ-
ղովուրդն, ըստ տեղացոց ըսածին, շատ
աւելի եղած էր: Ունիյամուէզցի չարա-
գործներու խումբ մը, ինչպէս որ կը պատ-

մէին, երկու երեք տարի յառաջ կողոպտեր էր, գեղերու մեծ մասն տարչտկելով: Մեր մարդիկն ուրախութեան մէջ էին ճամբորդութեան առաջին մասն լմննալու մօտ ըլլալուն վրայ. բոլոր երեկոյեան քայելու ժամանակն, քիրանկողքն փիպասանական դէպք մ'երգեցին, որուն կրկնութիւնն երբ կարաւանի պարն կ'ընէր, զուարճալի կու գար:

Տիւրն և ես յառաջ անցանք որս ընելու յուսով, բայց մերձակայ ժողովուրդքն ջարդեր էին, և թէպէտ գովէջներու և անդիւրներու ոտից նոր հնաքեր կ'երևէին, բայց իրենք մէջանոց չկային:

Փոքրիկ լճակի մ'եղերք բանակնիս զարկինք, որ խոտի մէջ թաղուած և սպիտակ, կարմիր և գեղին շուշաններով ծածկուած էր:

Աժան ըլլալով եզան գինն, մէկ հատ մը մարդկանցս համար գնեցի: Զինքը վարդին ձեռքէն փախաւ կենդանին, և սկսաւ կատաղաբար չորս ոտքով վազել. ստիպուեցանք որսի ոճով հրացանածգուծեամբ սպաննել:

Երկրորդ օրը 'ի շիհուէ լա Սինկա կը գլտնուէինք, կակուղ խոտի ժայռն շամբուն վրայ շատ գեղերու և մշակութեանց հանդիպեցանք: Ամեն գեղերն պատնիշափակ էին, ամեն դաշտերու բոլորտիքն խոր խրամներ բացած և ամրալէն հողաբլուրներ շինած էին, մինչև մէկ տեղ մ'ոռագելու փորձն ալ տեսանք:

Այս խնամքով արօրադրած դաշտերու մշակութիւնը մեծ աշխատութիւն և յարատեւութիւն կ'ուզէ: Նախ բոլոր երկիրն բահով կը փորեն, և ճանկերով լայն ակօսներ կը բանան, որ երկրորդ անգամ ցանելու համար բոլորովին չըլած ըլլան, այնպէս որ աստի տարուան հողերու տեղուակքն, երկրորդ տարին ակօս կը մնան:

Այն գեղերն որ մօտնք՝ առհասարակ ամենն ալ իրենց մաքրութեամբն և կարգաւորութեամբն նշանաւոր էին, ամեն կողմ գեղեցկալէն և զարմանալի ճարտարապետութեամբ խրճիթներ տեսանք, համեմատելով այն միջոցներն և նիւթերն զոր աշխատաւորք կը գործածեն: Թէ որ զրոյց ազիտութիւն չունենային, այս տեղոյս բնակիչքը քաղաքակրթութեան ստորին աստիճաններուն մէջ կարելի չէր դասել:

Անցանք այն դագաթնագիծն, որ կը դառէ Ռուֆիտաի հովիտն Նիլոսի և Գոնկոյի հովտէն: Ճիհուէ լա Սինկա բարեբեր տեղ մ'է, ուր Բակամոյոցի Վուամուիմպը իբրև վաճառականք բնակութիւն հաստատած են: Զանազան անձինք մեզի այցելութեան եկան, յայտնելով իրենց մեծ համարումն որ ունին մեր վրայ. զմեզ ալ իրենց Սայիտ Պուրկասս սուլդանին չափ կը յարգէին: Այս յայտնեցին մեզմով որ չէինք կրնար մխտիլ իրենց թուղթ, վառօք, ասղանի, ասեղք որոց պէտք ունէին. և անշուշտ միտքերնին դրած էին թէ չողորթութութեամբ ըստ բաւականի կը վարձատրուին: Անոցմէ մէկն ըսաւ որ Քադանկա գացած էր, և հօն Բորդոգալցիք հաստատուն վաճառականութիւն ունին փղոսկրի և պղնձի:

Յորեն գնելու համար երկու օր 'ի Ճիհուէ լա Սինկա անցուցինք, որով կը յուսայինք մինչև 'ի Ունիյանիյէմպէ երթալ. այս դարման ժամանակն, նոր լուսնի ծնունդն մեզի նեղութեանց առիթ եղաւ:

Այս երևումն տօնելու համար, ըստ մահմէտականաց սովորութեան, մեր առաքարներն սկսան հրացան արձրիկել, և չէին ուզեր հնազանդիլ գէնքերնին վար գնելու: Նախ խոհակերն անձամբ արձրիկց հրացանք ուղղակի հրամանիս հակառակ: Զինազերծ ըրի, և սպառնացայ վաղը պատժելու զինքն: Այն ատեն ուրիշ մ'իմնի ըսած թէ զամենքին ալ պատժէ, վասն զի մեր սովորութիւնն է ողջունել նոր լուսինը, և կ'ուզենք անոր հետեիլ. զինքն ալ նոյնպէս զինազերծ ըրի:

Այս հրացանածգութեանց արգելքը ոչ միայն պաշարին վատնելուն համար էր, այլ վտանգի ամենալուսնագաւոր ալ էր. ձգողներէն ոչ ոք հարուածին ուղղութիւնն կը դիտէր, եկածին պէս կը ձգէին և գնտակներն կը չէին բանակին մէջ ծայրէ ծայր: Անոր համար խոտի արգիլեցի այսպիսի վտանգաւոր գործ մը:

Յուլիսի 26ին մեկնելու ժամանակն, իմացայ որ զինազերծ առքարներն փախեր էին ուրիշ քանի մը կրողներու հետ. բայց այս յետոյց մէկն ամենախոնճմ մարդ, այն աղնուութիւնն ունեցաւ իրեն տեղ ուրիշ մարդ վարձելու:

Այն օրն երկու համառօտ ծայրոտ ըլլորներու կարգը անցանք, ապա անտառէ մը,

յետոյ ինկկայէ մը, ուր շատ արմաւենիք կը բարձրանային, և արեւ մոտալէն վերջն կանկ առինք. ջուրի չհանդիպեցանք: Երբ բանակն հասանք, իսսա և ընկերակիցքն տասուերկու փղաց անցնիլը տեսած էին: Քանի մը այծքաղք և մէկ երկայնուունգ կապիկ մը օրուան մէջ տեսնուեցան:

Յանկարծակի գոչելու ձայն մը լսեցինք. «ձ», «ձ» պատնէշին մէջ: Ամենքն ամենայն արագութեամբ դաւազանով թափեցան սողունին վրայ, այնպէս որ երբ ես հասայ, ջախջախմանն խօսք ըսելիք չկար. մինչև անկարելի եղաւ ինձ որդել թէ խեղճ կենդանին թունաւոր դասու կը վերաբերէր:

Անոր մարդկանց խօսքին նայելով, այս օձին խածուածքն մահացու էր, բայց հօս ալ Նւրոպային խածամուծ ամբողջին պէս, ընդհանուր է այն գաղափարն թէ ամեն սողունն թունաւոր ըլլայ, ասոր համար մեր մարդկանց ըսածն ալ արժէք մը չունի:

Քիբէրէհ, ուր տեղ կը ցանկայինք հասնիլ, իր վարդուկ ջրերն խմելու համար, երկրորդ օրն հասանք, երկու ժամ քայլելէն յետոյ, Հօտ տեղ վէճ ծագեցաւ մեր և մարդկանց մէջ: Գեռա առաւուտ էր, տեղացիք կը պնդէին թէ մօտ տեղ ջուր կը գտնուի, և անոր համար կ'ուզէինք շարունակել ճամբանիս: Իսկ առաջնորդն ընդհակառակն կ'ըսէր որ նոյն օրը ջուր պիտի չգտնէինք: Խաբէութենէ մը կասկածելով և տեղացոց ընտելեան վրայ չկարենալով վստահիլ, հրաման տուի ուրի ինկնելու: Բայց գեռ մզոն մը հազիւ ըրած էինք, մեր մարդիկն կանկ առին, Հարկադրեցայ ձայն չհանել:

Դէպքը յարմար կ'երևէր՝ բոլոր մեր առաջնորդն առջև կոչելով և գիրիներ խրատելու իրենց պարտուցը վրայ, այն յուսով որ վախ ձգեմ սրտերնին և յետագային մէջ աւելի ջանք ունենան:

Որովհետև կենսախիս երկայն պիտի ըլլար, այն չըմպայքն շանն հետ պառոյտ մը ըրի: Քանի մը գեղեցկալէն ցցապատնէչք, զանազան դարանափոսք ուչադրութիւնս իրենց զբաւեցին: Այս փոսերէն մէկն, որ ցցապատնէչին ճեղքուածքին մէջ չի նուած էր, այնպէս ճարտարութեամբ կեղծած էին, որ ուշիւ դննելէս վերջն ալ, անցք մը կարծեցի, և այն ուղղութեամբ սկսայ երթալ: Բարեբաղդաբար ճեղքուածքին

առջևն հասած ժամանակս, Լէոն դիմացս ցատկեց և նննգութիւնը յայտնեց խառնափոքոր կերպով ներս գլորելով. այնպէս դիս ազատեց ամենալուսնագաւոր անկամանէ մը: Փոսն այնպէս խոր էր, որ շատ աշխատանքով հազիւ կրցաւ դուրս հանել խեղճ ընկիւ. երբ դուրս ելաւ, զարմացայ և ուրախացայ զինքն ողջ և առողջ գտնելուս վրայ:

Ճամբայ ինկնելով ցորեկուրէն վերջն, մեծաւ տքնութեամբ անցանք կարգ ըստ կարգէ ինկկայնեք և դաշտագետիններէ, որոց խօսն այսդիս այնդին այրեր էին, ուստի բարակ ածուղն և մոխիրն բերանինս, կոկորդիս, քիթերնիս, ականջնիս կը լեցուէր, հազար անգամ շատցնելով ծարուսի տանջանքը: Արեւ մտաւ և ութին մօտ եղտիր մը գտանք, որոյ ջրովն ստիպեալ գոճ եղանք:

Յայտնապէս տեղացիք մասնաւոր դիտմամբ խաբեցին զմեզ, և մեր առաջնորդն, պէտք է խոստովանինք, իրաւունք ունէր պնդելուն վրայ, որպէս զի գեղին քով հանգիստ առնէինք:

Երկրորդ առաւուտն, մեկնելէն վերջն կրանիտի խոռոչի մը մէջ բաւական յստակ ջուր գտնուեցաւ: Շուտով քակաղիք բռնեցին վար ձգեցին, և ակնթարթի մը մէջ, խառնիխառն մարդկանց, շներու և էշերու բազմութիւն մը ջրամբարը ծածկեց, ամենքն 'ի միասին խմելով:

Այս օրագրին երեսներէն, կրնայ ընթերցողը մեր հանապազօրեայ կեանքն իմանալ:

« 28 յուլիս 1873. — Մեկնեցանք Եօթնին գէպ 'ի Քի Սառա-Սառա, հօս հասանք տասնութէն քառորդ անցած: »

« Միակիրպ երկիր մը, հօս հօս մեծաւ մեծ ծայրեր աւազուտ գալտի կամ գէշս երկրի մը վրայ, երկուքն ևս կրանիտէ հիմն ունին: Անհետ անտառներ, երբեմն երբեմն սղտի մարդագետիններ կը բացուին: Շատ ոտնառեղիք, և մի երէ չի տեսնուիր: »

Փարսիսէն դուրս ելլելով, կրանիտ և ազաւնի մը մէջ ջուր գտանք: Ի՞նչ մեծ բաղդ եթէ առաջ գտած ըլլայինք այս աւազանս: Առաջի օրուան խմած ջուրերնիս այնչափ թանձր էր, որ մարդիկն ծաղրածելով պոմպէ կը կոչէին: Անտառին մէջ

ամեններն խոտ չկայ, կրակի մատնուած են, և բոլոր գաշտերն առհասարակ նոյն ելքն են ունեցած: Կարաւաններն ճամբայ կ'ելլեն առանց զկրակն մարելու: Թե՛քե հով մը բաւական է մէկ կայծով բռնկցընելու բոլոր հեռի գաշտերու խոտերն: Մշտնեւորով ճամբայ ըրինք ամիսը պէս սե մոխրէ անկողնոյ մը վրայէն:

« Այս գիշերս էլ մը սատկեցաւ յամրաւ ծախ ցերմէ, որ յատուկ կ'երևի ծովնզե-րնայ իշոյ: »

« Կարծէինք որ կեցած տեղերնիս քիչ ջուր գտնուեր, բայց վրաններու չորս կողմ մը փորելով, երկու ոտք խորութեամբ գտանք, և կ'ենթադրեմ որ բոլոր այս կողմերս կրանիտի վրայ գտնուի, որ հօս, և ուրիշ տեղեր երկրիս մակերևոյթին մօտ ըլլալով, բազմութեամբ իջած անծրակայն ջուրն, դեռ չընդհացած, կը մզուի գէպ ՚ի խոր, ջրանց զգտնուելուն պատճառաւ: »

« Այս գիշերս դասալիք եղաւ ուրիշ կրող մ'ալ. աւելի աղէկ. ասով վաստակեցանք այն կերպան զոր քիչ օրէն պիտի ընդու-նէր: »

« Փանի մը ճանապարհորդք Ունիանիէ մ. պէն գալով ըսին մեզի թէ շատ աւազակ-ներ կան այն կողմերն. ուստի չկողոպտուե-լու համար ամենայն ուշադրութիւն պէտք էր բանեցընել: »

« Գարծեսլ ըսին՝ թէ կայ ուրիշ ճամբայ մը որ յՈւնիանի կը տանի քսան և հինգ հանգիստներով, բայց այս քայլաբաժինն չորսն բոլորովին անապատ տեղուանք են: Թէ որ բեռանց նեղութիւնն չըլլար այն անապատ անցըր կտրելու համար, քիչ ուրախու-թիւն չէր հինգ շարժուան մէջ այն լճին հասնիլ: Միտք ունիմ փործելու. քանամ էշեր ճարել, անոնցմով ամեն բան կը յա-ջողի, միայն թէ խոտ և ջուր չպակսին: »

« 29 յուլիս. — Ուրիշ դասալքութիւն մ'ալ մինչև անցած ութ զմեզ ուշացուց: »

« Յորեկուան մօտերն լճակներ գտանք, որոնք բնակաց ըսածին նայելով անձրեւա-յին ժամանակ գետի մը մասն կը ձևացընեն: Բայց երկրին նշաններէն կը տեսնուի որ անձրեւային ժամանակ բոլոր երկիրն կ'ողո-ղի, առանց ջրանցը մը տեսնուելու, կար-ծեմ որ վերի ըսած լճակներն նեղ և երկայն ձևով ջրակուտակ մը կը կազմեն: »

« Մեզմէ մէկն վազերածի մը սպաննեց. »

բայց առնելու համար հարկադրեցաւ եր-կայն տեղ վեր մագլցել: »

« Տիլլոն և ես որս սկսանք ընել: Բազմու-թիւն այծեղջերուաց տեսանք, ընդ որս և քանի մը միմպա, այսինքն վիթ, որոց վրայ արծակեցիկնք ատրճանակնիս: Թէպէտ շատ հեռի էին, բայց կարծեմ որ հարուածնիս զործ տեսան, վասն զի երկու գնտակքն պայթեցան առանց փոշի հանելու: Սա-կայն վիթք փախան և կորսուեցան փայ-լակի երազութեամբ: »

« Վայրի երէք ոչ միայն սակաւ չեն, այլ և բազմատեսակ, ամեն մէկ քայլին անասնոց զանազան ոտնատեղիք կը գտնուին: Ով որ ազատ ժամանակ ունենար, իրեն որսի դրախտ մը կրնար ըլլալ: »

« Ի դարձին կարաւանի մը գլխաւորն գտանք, որոյ վրայ ինծի խօսած էին ՚ի Փի Սաւան—Սաւա. Հոյակապ արար մ'է, սպի-պակ մօրուբով ծեր մը, բայց հաստապինդ սրունից վրայ, և կայտառ՝ ձկան՝ մը պէս: Ոմեն վաճառականները, ըսաւ մեզի, կը ճնշեն և կը նեղեն զՄիքամպոյ, որ իր մէկ գեղն ալ կորսընցուց, և այժմ անտառի մը մէջ չըլլափակեալ է: Թապուրա ամայի է. հօն հիւանդ մը միայն կը գտնաք: »

« Դեպք ՚ի հիւսիսային արևմուտք եօթն միլոնի ճամբայ ըրինք: »

« 30 յուլիս. — Եօթէն քիչ վերջն մեկնե-ցանք, խսալի հետ մորենեաց մէջ մտանք, երէ որսալու համար, առանց ճամբանիս աչքէ կորսնցընելու. բայց կապիկներ և այծեղջերուք միայն տեսանք. այս վեր-ջինքս հարուածէն հեռի: »

« Երեք, չորս ժամ Թափառելէն յետոյ, բաւական համարեցանք, և ճամբու վրայ գալով, ծանր ատրճանակս փոխեցի որսի հրաքանիս հետ, և երկու երեք Թռչուն սպաննեցի: »

« Քիչ ետքը, քանի մը աքար չփոթած առ իս վաղեցիկն. կարծէին որ իմ հրացանա-ձգութիւնքս Վտադուգայից հետ հանդի-պելուն նշան ըլլայ, շատ երկիւղալի ծոզո-վուրդ, կամ Ռուկա—ուկայից խուր մը, որք զանազան ցեղերէ աւազակներն են: »

« Փութաջի կարաւանին հասնիլ, որ նոյն խառվութեան մէջն էր: Երբ եղածն իմացան, ճամբանին շարունակել սկսան, և մէկին Ուրվուրուի առաջին գեղին կը մօտե-նայինք, որուն քովերը զետեղեցանք: »

« Հազիւ դեռ վրանները կանգնած էինք, գաւառի գլխաւորէն մարդ մ'եկաւ ըսելու ինծի, որ իւր տէրն՝ որոյ Գաբորի Արարներն յանձնած էին աղէկ ընդունելութիւն ընելու մեղի, կ'ուզէր գիտնալ թէ ի՞նչ պատճառաւ մայրաքաղաքն հասնելու մօտ, բռնակնիս դրած էինք կէս մղոն հեռի։ Վրխաւորին պատասխան ուղարկեցի, որ շատ հոգնած էինք նորէն ճամբայ ելնելու, բայց վաղը կու գամ իրմէ բան գնելու։

« Երկիրն բարեբեր կ'երևայ։ Հողը եւ բերք միզր խոր փորելով ջուր կը գտնուի, որ ամեն կողմն երկրին մակերևոյթին մօտ է։

« 31 յուլիս. — Ուստի այս առաւօտ եօթն ու կէսին, ճամբայ ինկանք, ութին զիւղը հասանք։ Մեծ է, աղէկ կարգաւորութեան մէջ, և պատեալ ցցապատնէշով։ Վրխաւորին և ուրիշ տներու մէջ բաժանում մը կայ, նոյնպէս հիւղերուն և մնացած ցցապատնէշին բացուածքին մէջ։ Ծանր տախտակներով, հաստ ծառայ մը արմէն կացնով կտրուած, շինին դռները կը գոցեն, որք մէկ հողույ միայն անցք կը թողուն, և կը բացուին սրահի մէջ տեղն, որ մեծ Ս գրոյ երկնցուցած ձևն ունի։ Այս նեղ անցքին երկու կողմանց վրայ ծակաթի կան և թշնամոյն շատ փնաս կը հասնի եթէ ուզենայ բռնութեամբ անցնիլ։

« Ուրիշ դռներու, այն տներուն որոց պատն պատնէշի մասն կը կազմէ, աղխերը նոր տեսակ ձև ունին, հնարիմաց և հաստատուն կերպով շինուած։ Դրան գլխաւոր գերանն, եթէ կրնայ ըստիլ, հիւսուած է ծանր մարդակներով, վերի կողմերն ալ ծակուած։ Երբ գուռը կը բացուի, մարդակները վեր կը տնկուին և դէպ ի մամբան կը դառնան։ Երբ կը գոցուի, աղխին ստորին կողմը լայնքովը զետեղուած փայտի կը յենու, ամուր կերպով հաստատուած, և շարժուն գաւազանիկ մը զինքը փակ կը պահէ ներսի կողմէն։

« Վրխաւորն, որ իր հպատակաց մեծագոյն մասէն աւելի բիշ սև էր, մեծ չքով զգեստներ հագած էր. դեռ այնպէս ճոխ հագուած երկրցի մը չէի տեսած։ Մեր հասած ժամանակ, գեղեցիկ հնդկի տիւղի (1)

(1) Տիւղի, լալի հնդկացի՝ Սուբաթ լինուած կերպաս մ'է։ Ի Զանգեպար ծոպեր կը յաւելուն, շատ անգամալ ոսկի թելեր վրան կը բանին։

մը և Մասգադի տնայրի (2) մը ձգած էր իր վրայ։ Սրուներն բռնաւորեալ էին ծանր օղերով և պարուրած և պղնձի թելերով, դաստակն և բազուկն զարդարուած էին փղոսկրէ մանեակներով, փղի կաշիէ փողպատն, արուեստով միտաղեկ թելով շրջափակուած՝ չքանալի մը պէս, ծովեղերքէն եկած խնցւոյ մը յղկեալ և սպիտակ ներքստապտեանն կախած էր։ Այս վերջի տիւղներն կը կոչուի քիոնկուա կամ վիոնկուա (3)։

« Մեր առած ցորենն մէկ շիքքայի գնով եղան, ամեն տասն քուպպայի (4), այսինքն չորս կանգնոյ իւրաքանչիւր քսանէշորս, քսանէնիք լիպրէն։ Հաւք և ոչ խորք սակաւաթիւ էին, բայց աղանձիք անհամար թուով։

« Բոլոր օրն այցելուաց շարունակ երթեակէ մ'էր, որք իրենց գալատեանը խիստ յայտնի նշաններ թողուցին։

« Չգոտտոսի ինն ճամբայ ելանք, և յետ երկայն համգատէ մը ճոխ որսով անտառի մը մէջ, Միմպոյ հասանք։

Մուրֆի բնձուղտի մը պատահեցաւ, բայց զարմանքէն ափշած, ատրճանակն արձակել մոռցաւ, մինչև որ կարծրամորթն հարուածէն շատ հեռի էր։ Ուրիշ կողմ, Տիւղն և ես խոտաւէտ դաշտէ մ'անցնելու ժամանակ, գոմէշներու հանդիպեցանք, բայց արօտականքն կարաւանէն խրտելով փախած էին, մեր մերձենալէն առաջ։

Տիւղին սովորաբար կարմիր, կանաչ, գէղեցիկ գոյնով է. դասնզան գունոց չերտերով։ Ամենէն աժանն եօթն տողարի կը ծախուի 3 մեգր և 0.25 շ. մեգրն. առանց ծոպի երկու տողարի էր համի։

(2) Անարն կերպաս մ'է կապոյտ և ճերմակ գոյնով, կարմիր շրջազարդով և կապոյտ, կարմիր և գեղին գոյններով։ Չորս մայրերն մեծ քառակուսիք ունի, որուն հետ հիւսուած է կարմիր։ Տիւղիքն աւելի աժան է, որդերի քսան կանգունը, մինչև երեսուն տողարի կը ծախուի։

(3) Թեցին որ այս տիւղներ կը մատակարարէ, կոն մէկ հնդկային ծովուն մէջ. քիչ տասնէն պիտի տեսնաք թէ ի՞նչ գին կ'ունենայ Ափրիկոյ կեդրոնն և արևմտեան ծովեղերէն։

(4) Քուպպա, ի Զանգեպար միւլթեան չափն է, մէկ վարկէն քառակուսի գրեթէ մինչև մէկ լիպրէ և կէս ծանրութիւն ունի։ Բայց ասկէ աւելի ըստ կամե բան չի կրնար ըլլալ. մեծ և փոքր Քուպպայի կը բաժնուի, և ընդհանրապէս ամեն մը ի գործ կ'ածեն, որուն ընդունաւ կուլթեան փախերպուլթեանն խոր չկայ։

Անտառին մէջ մտած էինք իւրաքանչիւրն զանազան կողմանէ։ Այժմ շնորհ բաղման թիւ էին։ Մէկ հատն վերաւորեցին, որ մաքառափոց մէջ զնաց մեռնելու, գտնելն անկարելի ըլլալով, ձեռքէ հանեցինք։

Երկու օր վերջը 'ի Մարտաւ էինք, ուր սովորաբար կարաւաններն կը կենան։ Բանակեալ զաշտը պաշտպանեալ էր աւազին ժայռերով։ Յուր ունենալու համար — վասն զի ուրիշ տեղ անհնար է գտնել — պէտք է այս ժայռերուն մեծագոյնին ստորոտն փորել։ Այս, իրենց ըսածին նայելով, գեղի մը տեղն կը ծածկէ, որոյ վրայ ինկած էր, բոլոր բնակիչքն տակը ճկալով։ Ընդհանուր կարծիք կայ՝ թէ այն տեղն կ'երևին մեռելոց հոգիքն։ Եթէ սակաւ յարգանք խօսիս աղբիւրին վրայ, եթէ փոխանակ անուանելու մարտա, որ պոմպէի, արմաւի գինւոյն և ուրիշ գինւոյլընտղ լուսելիաց պատուանունն է, կոչես զայն պարգապէս մաճի, որ սովորական ջրոյն կը տրուի, եթէ քովէն կոչելով անցնիս կամ մերձակայքը հրացան արժրկես, ոգիքն աղբեր ակուներն մէկէն կը գոցեն։

Անոնք որ կու գան ջուր առնելու այս տեղէն, սովորութիւն ունին ջրհորին մէջ գունաւոր ապակույ կամ լաթի կտորներ ձգելու, հաճոյական ընծաներ աղբեր պահապան ոգւոց։ Երբ ես չէի ուզեր այս սովորութեան համակերպիլ, ծերունի Պոմպայն, զարհուրելի արկածներէ վախնալով եթէ այս օրէնքս չի կատարուէր, իր կողմանէ վճարեց նուրբն ծախքը։

Իրեկունն Վուանիամուէզցոց խումբ մը մեզի հասաւ, փղոսկրի և մեղրի բեռներով, Երկրորդ աւուր ընկիւք ճամբան երկայն ըլլալով, երեքին զարթուցի բանակն, բայց մարդիկն պահուրեսեցան, և հազիւ առաւօտեան հինգին ուղեորեցանք։ Ալէկ մը քաւելէն վերջը, Տիլլոն և ես խտորեցանք ճամբէն, որովայնը լեցնելու յուսով։ Բայց յոյսերնիս պարսպ ելաւ. շատ հեռուն է քանի մ'այծեղջիբուք, և երկու առիւծ վեց չէարիւր քայլ մեզմէ հեռի, կը դառնային իրենց որջը, բոլոր բոլոր ասոնք տեսանք։ Ժամէ մը վերջը նախաճաշիկնիս լծակի մ'եղբքն ըրինք։ Վուանիամուէզցիք թողուցին զմեզ, բայց քիչ վերջն, մեծ զարմանքով իրենց խուճապելով դարձր տեսանք ըսելով թէ Ռուկա-ուուկայք (աւա-

զակք) իրենց երկու կանայքը յափշտակեր՝ փղոսկրն և մեղրն գողցեր և մէկ մարդ մը վերաւորած էին։ Աւելցուցին նաև դարձակ թէ չարագործքն մեր տնցնիլը կը լըրտեսին, ուստի զգուշութիւն ընելու է։

Այս լուրը առնելով կարաւանին կարգերն սեղմեցի և զօրքերն հաւասար հեռաւորութեամբ բաժնեցի չուոյն երկու կողմերն։ Հինգին մօտ մեծկակ լճակ մը գտնելով հօն կանկ առինք։ Բանակն մացառափրշով պատեցինք, մէկ կողմն ջուրն ունելով 'ի պատսպարութիւն, որպէս զի յարձակման մը ժամանակ անկէ չզատուէինք։ Արեւ մտնալէն քիչ վերջն չըջապատին մէջ քանի մը նետեր ինկան։ Հրացանի երկու երեք հարուածներով դէպ 'ի դուրս պատասխանեցինք, որով մեր հանդարտութեան արգելք եղող չգտնուեցաւ։ Այլալուսոյն ուղեւորելով գետի մը ցամաքեալ անկողնէն անցանք որ զՌուկուրու Ունիանիլմալէն բոլորովին կը բաժնէ։ Հօն տեսանք երեք չըջապատով դաշտեր, գեղեր՝ ցցապատնէլով, փոսով, եւ փոքրիկտով։

Յիշուրու բանակինս զարկինք, և մէկ օրէն կը հասնէինք 'ի Քուիհարա, ուր Արիիկէի անցքին առաջին մասն կը լմնայ։ Նոյն օրը պատգամաւորներ զրկեցի առ Գլխաւոր տեղւոյն, իմացնելու մեր գալուստն, վասն զի քաղաքավարութիւնն կը պահանջէր, որ այսպէս կանխաւ ծանուցուի Արաքավարութիւնն մտնելու ժամանակ։

ԳԼՈՒԽ Թ


Ունիանիլմալէ. — Այցելութիւնք. — Սիրաւէր հերեկալութիւն. — Մերամալոյ. — Պատեւազմն ծագումն. — Ունիանիլմալէի զօրանիստը. — Սիգեթութիւնք. — Մեր բակազներու գերութիւնն. — Պէգերի նամակը. — Մշեղալի հետ հաղորդակցութիւնք. — Խափանումն իր տաճկեղանք. — Բակազի մ'եղած անարգանք. — Ջինուորաց խուճուկութիւնն. — Վիճակին նեղութիւնք. — Շուարմունք. — Զերմ և կուրութիւն. — Բեռնակրաց փախուստը. — Այն պատճառաւ եղած ծախքը. — Արաքներու մարդավարութիւնն. — Գեքեաց վաճառումն. — Լիվիկնսոյնի մահուան լուրը։

Մեր հասնելու տուած ծանուցմանս 'ի պատասխան, երկրորդ առաւօտ Սէյա Խպն Սէլիմ կառավարէն թուղթ մը ընդունեցայ,

որ զմեզ կը հրաւիրէր իրեն հետ նախաճաշելու, և մեր ծառայութեան կը թողուր, որչափ ժամանակ որ կենայինք յՈւնիանի-յէմպէ, այն տունն զոր շնորհած էր Սղանլէյի և Լիվինկսդոնի: Իր Քուէքուրուհ բնակարանին մէջ մեզի կը սպասէր, գէպ'ի հօն ուղղակի գնացինք: Փառաւոր ընդունելու թիւն ունեցանք և զարդարուն սեղան, մսեղէնք, ցորենէ կարկանդակք, կարագ, թէյ, սուրճ, գերազանց կերութիւնով, որուն

պատիւը այնպէս աղէկ պահեցինք, որ մեր հիւրընկալն կարծեմ թէ շատ զարմացաւ:

Երբ կերանք կշտացանք, Իպն Սէլիմ, Արաքնեբու հետ, որոնք զմեզ բարեւուելած էին, Քուէհարա տունը տարաւ, զոր մեզի պիտի տար, և յետ անձամբ ամեն բան մանրամասնաբար ցուցնելու, թողուց որ մեր ուզածին պէս տեղաւորուինք:



Տունը մեծ քառանկիւնի կերտուածք մ'էր, ծածքը տափարակ և յարեղգէմ չորացած կղմխտորով հաստատապէս շինուած. հօս դրուած յատակագիծն, ինչ կերպով բաժնուած ըլլալը կ'իմացնէ: Առաջին զոր-ծերնիս եղաւ հատուցանել և արձակել մեր բակաղիներն, որոնք իրենց զաւնագրու-դրութիւնը ընցուցած էին: Ուստի մեզի միայն 13 կապոյ կերպաս մնաց: Երեկոյին զարձեալ տնանք կառավարողը, և ըսաւ մեզի որ վաղը տեղացի նշանաւոր Արաքնե-բուն այցելութեան պիտի երթայինք, և

աղէկ բանն որ կար այն էր, որ օրերնիս պիտի սկսէինք նախ իրեն նախաճաշի երթալովն:

Իպն Սէլիմ Պիւրղընի և Սպիբի ընկերացած էր հուշակաւոր ճամբորդութեանը մէջ, երբ գտան զԴանկանիքա և Վիկտորիա Նի-անդա. Սայիտ Մէհիտ սուլդանն զինքն անոնց ներկայացուցած էր: Ապա ինքը մեկնած էր Սպիբի և Կրանդի հետ գէպ'ի Վիկտորիա լինն, և Հիւանդութեան պատ-հառաւ Ունիանիյէմպէ մնացած էր, այն ժամանակէն 'ի վեր հօն կը գտնուէր: Մեծ

սէր և քաղցր յիշատակ ունէր իր Հին տե-
րանց վրայ, և անոնց յարգանաց համար
մեկի ամենայն մարգարտութիւն ցուցուց:
Ոչ միայն մեզի իր տունը տուաւ, այլ ա-
ռաւօտ և երեկոյ ընծայ կը դրկէր աման
մը կաթ, հաւկիթ, այծեր և ուրիշ կաթնե-
ղէնք: Երկրորդ օրուան ծառայութիւնն
կարծա՛էս աւելի դառն եղաւ: Եթէ գիտ-
նայինք առաջունէ յանձն չէինք առնե-
ր սակայն ամեն երկրի իր տեղական սովո-
րութեանց պէտք է յարմարիլ:

Յետ փառաւոր նախաճաշի մը, իսկ Սէ-
լիմ առաջնորդեց մեզի առ արեւուկանս
գաւառին, որք մեր այցելութեանն կը սպա-
սէին: Ըստ սովորութեան հարկ եղաւ ա-
մին տուն ուտել և խմել, և որչափ կը
բռնադատէինք զմեզ այն եղա՞մ ազնուու-
թեանց ուրախ երես ցուցնել, մեր ստա-
մոքսաց ընդունակութիւնն չափաւոր ըլլա-
լով, կը տարակուսիմ որ հիւրընկալու-
թեանց ամենայն պատիւն չլրացանք հատու-
ցանէլ:

Ունիանիյէմպէի Արաբներն ամենահան-
գիստ կեանք կ'անցնեն: Գնդեցիկ չէնքով
մեծամեծ տուներ ունին, պարտէզներ և
դաշտեր: յորոց ցորեն, սոխ, սխտոր, վա-
րունկ և այլևայլ ընդեղէնք, զանազան տե-
սակ պտուղներ, ծովեղերքէն բերուած. և
կարաւաններու ձեռքով հաղորդակցու-
թիւն ունին ջանդիպարի հետ, ուսկից բե-
րել կու տան թէյ, սուրճ, լաթեղէն, մոմ,
օճառ, և ուրիշ ճոխութեան առարկայք:

Բայց մեր այցելութեան ժամանակ, ի-
րենց կեանքը մեծ խառնակութեան մէջ
էր Միրամալոյի աթոյժով, որուն զէմ երկայն
ժամանակէ 'ի վեր կը պատերազմէին,
ղեւ առանց ամենեւին կռուոյ դարբելուն
նշան մը տեսնուելու: Ունիանիյէմպէ եղա՞մ
ժամանակս չկրցայ պատերազմին բուն
պատճառը իմանալ, ուչ ատեն այս նիւթիս
վերաբերեալ քանի մը մանր մունր տեղե-
կութիւնք ստացայ, ի սկզբան կ'երեթ թէ
Միրամալոյ Ունիամուէղի փոքրիկ գաւառի
մը գլխաւորն եղա՞մ, և շատ ժամանակ Ա-
րաբներու հետ մեծ բարեկամութիւն և
անոնց շատին հետ խաղաղ վերաբերու-
թիւն ունեցա՞մ ըլլայ: Բազում գերեաց փա-
ճառականներ իր գեղին քով տուներ չի՞նա՞մ
էին, ինքք յաճախ մէկ անգամով յիսուն
զլուխ անասուն կու տայ եղեր անոնց՝ որոց
վրայ համարումն կը ստանայ:

Ստախօսին մէկն այս բարեսրտութեան
պատճառաւ կը փորձէ յերաշխի առնուլ
փղոսկրի աճազին քանակ մը: Բայց վճար-
ման օրն, կը ծագրէ զՄիրամալոյ որ այնչափ
վստահութիւն ունեցեր էր: Միրամալոյ Ու-
նիանիյէմպէի Արաբներուն կը դիմէ որ իր
բողոքին ձայնակցին: Իրեն խնդրուածքին
և ոչ իսկ կը պատասխանեն, այն ատեն
ինքը կ'որոշէ իր ուզածին պէս բանը ըմբը-
նել: Քիչ ժամանակ վերջը, կը տեսնայ որ
կարաւան մ'իւր սահմանը կը հասնի, որուն
գլխաւորն զինքը խարողին ընկերն էր: Կը
յայտնէ կարաւանին իր միտքը, թէ զիրենք
չէր թողոր որ անցնին ինչուան որ իր փը-
ղոսկրէից գինն չհատուցանեն: Ստիպեալ 'ի
հատուցանել Արաբն իրեն եղա՞մ պարտ-
քը կը վճարէ: Բայց Միրամալոյ ուրիշնե-
րու ընտրութեան հաւանող մարդ չէր, ինք
զինքն կ'ուզէ գոհացնել: Կը յարձրիկ Արա-
բին վրայ և բոլոր բեռները կը յափշտակէ:

Այս ժամանակէս 'ի վեր կը շարունակէ
պատերազմն 'ի մեծ վնաս վաճառականու-
թեան. ծաղրական պատերազմ, սակայն
անհամար չարեաց աղբիւր մ'է, վասն զի
Միրամալոյ կ'ասպատակէ և կ'ապականէ
այն տեղերն որոց բնակիչք չեն ուզեր իրեն
հետ միաբանիլ: Շատ անգամ յարձրեալ է
Արաբներու գեղերուն վրայ, գերելով կեն-
դանիներ իրենց տերանց աչաց սողին,
մինչդեռ իրենք վախերնէն տուններու մէջ
փակուած կը կենան դէմ դնել չկարենալ-
նուն պատճառաւ:

Այն ժամանակ յՈւնիանիյէմպէ հազար
Պելուչցոց զօրանիստ մը կար, որ մեր հօն
գտնուած ատեն ծովեղերքէն եկածներով
2,000ի հասաւ: Արաբքն տեղացի դաշնա-
կից ալ ունին, և թէ որ կարենային միա-
բանիլ, դիւրաւ կը յաջողէին ջախջախել
զՄիրամալոյ: Բայց միջերին այնչափ կող-
մակցութիւն կար, որ անկարելի էր մէկ
խորհրդի մը հետեւիլ:

Երկու կողմանէ ալ պատերազմն վայրա-
գութեամբ կ'ընէին: Անվնաս բնակչաց գե-
ղերն այրել, սպաննել անպատասպար ծովո-
վորդն, անտառներու մէջ հալածել, արա-
խողխող ընել, փառաց ծայրն հասած կը
համարէին:

Արաբները երկու գերի կու տային — ա-
րու և էգ — անոր որ իր սպաննած թշա-
մուդն կորուցն իրենց ներկայացնէր: Բը-
նականաբար այսպիսի ընթացք մ'ոխակա-

լուծիւն կը յարուցանէր, և թշնամութիւնք
որ աւուր վրայ կ'աւելնային: Եւս, կը զար-
մանամ միայն Միրամայրի սրտոտութեան
և անյողողգոտութեան վրայ՝ որով կը շա-
րունակէ զպատերազմը:

Այցելութիւնէն երկու օր վերջը, ջերմէ
բռնուեցայ. Տիւրք և Մուրֆի քիչ վերջը
նոյնն ունեցան:

Մեր առաջին խումբ կազմող բեռնա-
կիրքն մեկնած ըլլալով, անոնք զորս մեր
հասնելու ատեն վարձեցինք, որոց ստակն
ամսական էր, մտածեցին թէ ժամանակն
յարմար էր գործէ ետ կենալու. և կը պա-
հանջէին որ երկու ամիս առաջ կանխիկ
վճարուի իրենց: Որչափ կրցայ, դէմ գրի.
բայց տեսնալով թէ խմբովին դասակարգ
պի-
տի ըլլալին մէկ ամիս մը կանխեցի. այնու
հանգերձ յիսուն վաթսուն հոգի ընդու-
նողներէն հաւասարապէս փախան:

Հարկ է ըսել թէ քիչ մը բարձր աստի-
ճանի Արաբքն, որչափ մեզի մարդասիրու-
թիւն կը ցուցնէին, և ծառայութիւններ
կ'ընէին, ստորակարգեալ վաճառականք
ձեռքի տակէն ամեն կարելի եղած արգելք
կը հանէին: Ոչ միայն զմեր բեռնակիրքն 'ի
դասակարգութիւն կը հրապուրէին, այլ նաև
իրենց կամացը դէմ հետերնին կ'աւանդին:
Այս եղածներէն մէկն զիս շատ վշտացուց:
Մեր մարդիկներէն շատն, յետ բաւակու-
նապէս խմբնուն, կարաւանի մը զլիսոյն
ետեւէն գացին որ պիտի մեկնէր, և ինքը
գիտէր որ անոնք մեր մարդիկն էին:

Ղրկեցի իմ մարդիկս փնտրուելու. պա-
տասխան ընդունեցայ, թէ զանոնք չենք
թողուր մինչև ես յանձն չառնու իւրա-
քանչիւրին համար երեք տողի վճարելու,
պատրուակաւ որ առաջ իրենց այսպիսի
խտատումն եղած էր:

Այսպիսի անիրաւութիւն մը չուզելով
յանձն առնուլ, կառավարողին գիմեցի, որ
պատճառն իմացաւ և հրամայեց որ բա-
կազիններն յետոս ուղարկուին ինչպէս որ
տարած էին:

Բայց գործը ըննալէն առաջ դարձեալ
ջերմ եկաւ վրաս, և Տիւրք գործին վրայ
ստողգ տեղեկութիւն չունենալով, տուաւ
կերպասը: Երբ փարատեցաւ ջերմս, ցա-
ւով իմացայ, որ ոչ միայն կորսուած էր
կերպասն՝ այլ նաև զմարդիկն ալ չէին թո-
ղուցած, մանաւանդ թէ վիզերէն չուան
անցընելով, հետերնին տարած էին:

Յետ սակաւուց, Մզեզայէն զրկուած
կարաւան մը, որ Ռեհանգայի գլուխն էր,
սըր Սամուէլ Պէքէրի նամակ մը բերաւ
Լիվինկսդոնի երեսագործի: Մտածեցի թէ
ներելի էր ինձի բանալ այս նամակը, որ
ճանապարհորդին վրայ կրնար ինձի տեղե-
կութիւն տալ: Տորդէ Ֆաղիթոյէ ուղղուած
էր և սըր Սամուէլի Գապպա—Ռէկկայի
(Գամբազի) հետ ունեցած պատերազմը կը
յիշատակէր, որ Ունիորդի գլխաւորն էր,
յորում շատ մարդ կորսնցուցեր էր:
Մզեզա սըր Սամուէլի օգնէր էր, և ասով
գիրութեամբ կրցեր էր յառաջ անցնել:

Կը շարունակուի.

Աջեհ մետաղաց վաճառականորիւնք. —
Մինչև Ամերիկայի գիւտը, ազնիւ մետա-
ղաց չարժանքը կը հասնէր միլիարտ մը
Ֆր. այսինքն է, 700 միլիոն Ֆր. արծաթոյ
և 300 միլիոն Ֆր. ոսկոյ: Ի 1530է ց1848
աճում մ'եղաւ, որ ելաւ մինչև 44 մի-
լիարտ, այսինքն է, 30 միլիարտ ոսկոյ և
14 արծաթոյ: Սիպերիոյ, Գալիֆորնիոյ և
Աւստրալիոյ ոսկերէր հանքերը յայտնուե-
լէն ետքը, հանուած ոսկոյ քանակութիւնը
շատ աւելի գերազանցեց քան զարծաթը, և
այս այնչափ ճշմարիտ է, որ միայն վեց
տարուան մէջ, 1846էն ց1852, ոսկոյ բեր-
քը 170 միլիարտ ֆրանքէն ելաւ ց300 մի-
լիարտ, որ է երեքսպտիկն: Միայն 1878

տարին կը բերէր, աշխարհիս բոլոր հանքաց
մէջ, 77 միլիարտ Ֆր. գումարի: Ամեն տարի
280 միլիոն գումարի ոսկի կը գործածուի.
Գաղղիա կը գործածէ 70 միլիոն գումարի.
Միացեալ Նահանգք, Ստորին Նահանգք,
Գանատա և Աւստրալիա 60 միլիոնի. Ռու-
սաստան, Գերմանիա, Աւստրիա և Իտա-
լիա 70 միլիոնի. և Անգղիա 6 միլիոն լիրա
ստուելիքի (150 միլիոն Ֆր.): Վերջի 20 տա-
րիներու մէջ ոսկոյ և արծաթոյ վաճառա-
կանութիւնը աւելցաւ 9 առ 100 Անգղիոյ
համար, 164 Գաղղիոյ համար, 277 Պել-
ճիոյ համար, 279 Ռուսաստանի համար,
243 Աւստրիոյ համար և 591 Իտալիոյ հա-
մար: